26/01/2017թ.

Ռեյտինգային ընտրությունների վերաբերյալ

Հարգելի փաստաբաններ, նախընտրական քարոզչության շրջանակներում, ցանկանում եմ երկու խոսք ասել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդում՝ ռեյտինգային ընտրությունների վերաբերյալ: Ռեյտինգային ընտրություններն իր մեջ ունի խորը փիլիսոփայություն, մասնավորապես այս համակարգը դրվել է ՀՀ ՓՊ խորհրդի ընտրությունների հիմքում, որպեսզի այն փաստաբանը ով վայելում է հեղինակություն փաստաբանների շրջանում, ընտրվի որպես խորհրդի անդամ: Իր հերթին նման փաստաբանների ընտրվելու դեպքում ՀՀ ՓՊ խորհրդի որոշումները անվերապահորեն կվայելեն հարգանք փաստաբանների շրջանակում և շատ քչերը կլինեն, որ կասկածի տակ կառնեն դրանք՝ հիմքում ունենալով հարաբերականորեն հեղինակավոր փաստաբանների ասածը կոնկրետ հարցի վերաբերյալ:

Հիմա, ինչո՞ւ եմ խոսում սրա մասին, քանի որ ցանկանում եմ բարձրաձայնել, որ ՓՊ խորհրդի ընտրությունների գնալ թիմային գաղափարախոսությամբ կամ այսպես ասած ցուցակներով, էականորեն ախտաժետում է ռեյտինգային ընտրությունների գաղափարը: Դիցուկ վերցնենք մեկ օրինակ: Փաստաբան Պողոսին ես ճանաչում եմ և հարգում եմ, նա ինձ խնդրում է ձայնս տամ 11՝ ինձ ոչ հայտնի փաստաբանների: Արդյունքում այդ փաստաբանները դառնում են խորհրդի անդամներ և ի թիվս այլ որոշումների կայացնում են նաև որոշումներ կարգապահական գործերով: Նման պարագայում մեծ է հավանականությունը, որ նրանք քվեարկելու են այնպես, ինչպես կորոշի Պողոսի թիմը, իսկ ՓՊ խորհրդում կայուն թիմային մեծամասնություն ունենալը անխուսափելիորեն առաջացնելու է տարբեր տեսակի ճգնաժամեր ՀՀ փաստաբանների պալատում: Ավելին տեղիք տալով թիմային կամ ցուցակային գաղափարախոսությանը, մենք ետին պլան ենք մղում ռեյտինգայինը, հետևաբար իրավունք էլ չունենք բողոքելու, որ Պողոսի ցուցակի Պայծառը երբեք դատարան չի գնացել, սակայն գնահատական է տալիս դատարաններից դուրս չեկող փաստաբան՝ Պետրոսի վարքագծին: Սա նորմալ է, քանի որ դուք ինքներդ եք ընտրել ձեզ անծանոթ Պայծառին, ի նշան Պողոսի հանդեպ ունեցած հարգանքի: Դե ուրեմն բարի եղեք մի բողոքեք, քանի որ Պայծառը խորհրդում ձեր շահերի սպասարկուն չէ, այլ Պողոսի շահերի սպասարկուն է:

Իհարկե կարող ենք մեզ անտեղյակի տեղ դնենք և անորոշ դեմքի արտահայտությամբ ասել, որ ներկա ընտրություններում ցուցակներ չկան, թիմեր չկան և պայքարը գնում է գաղափարների և ոչ թե անձերի շուրջ, բայց ես ցանկանում եմ արձանագրել, որ ըստ իս,

«ԳՅՈԶԱԼՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ» ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՍՊԸ |
ՀՀ, Երևան 0015, Արգիշտի 7, 301 սենյակ (Մոսկվայի տուն),
Հեռ. (374 10) 510256, (374 91) 328839
էլ. փոստ՝ gevorg@lex.am
Կայք www.gyozalyan.com
www.lex.am

թիմային և ցուցակային գաղափարախոսությունը ակնառու է և ես սա ասում եմ ավելի շատ փաստաբանների ապագա սերունդներին, որ միգուցե նրանք դասեր քաղեն այս ամենից և թույլ չտան այն սխալները, որոնք թույլ են տրվել անցյալում և որի հետևանքները նախկին և ներկա ճգնաժամներն են:

Ինքս այս պայքարի մեջ չեմ մտել ինչ-որ մեկի շահերը սպասարկելու համար, այլ իրագործելու այն գաղափարները, որոնց ես հավատում եմ: Կստացվի շատ լավ, չի ստացվի հետևություններ կանեմ և կանցնեմ առաջ: Ուստի հորդորում եմ բոլոր փաստաբաններին քվեարկել այն փաստաբանի օգտին ում ցանկանում եք, բայց դա արեք գիտակցված և թող չգործի հայտնի՝ «սա մեր Պողոսի քիփնա» լոզունգը, քանի որ բազմաթիվ են դեպքերը, երբ այդ Պողոսի «քիփը» վարի է տվել թե Պողոսին և թե Պողոսի համախոհներին:

Հարգանքով՝
Գևորգ Գյոզալյան